# ԲԱՌԱՐԱՆ

| | |
|---|---|
| «Անցնել Ռուբիկոնը» | վճռական քայլ կատարել իմաստով |
| «Բարդուղիմեոսյան գիշեր» | հակառակորդի նկատմամբ դաժան հաշվեհարդար տեսնել իմաստով |
| «Եկա, տեսա, հաղթեցի» | կարճ նամակ, որն ուղարկեց Կեսարը Հռոմի Սենատին |
| «Եվ դու, Բրուտոս» | մտերիմ մարդու կողմից անսպասելի դավաճանություն |
| «լակոնիկ խոսք» | խորիմաստ կարճ խոսելու ձև հին Սպարտայում, Լակոնիա մարզի անվանումից |
| «Հոմերոսյան դարաշրջան» | Հունաստանի Ք.ծ.ա. 11-ից 9-րդ դդ. ժամանակաշրջանը, որ հայտնի է Հոմերոսի պոեմներից |
| «Մարաթոնյան վազք» | օլիմպիական մարզաձև, որը կազմում է 42կմ 196 մետր |
| «Մեծ պատ» | Չինաստանի հյուսիսային սահմանին կառուցված պարիսպ քոչվորներից պաշտպանվելու համար |
| «Մետաքսի ճանապարհ», | Չինաստանից Միջին Ասիայով և Հայաստանով դեպի Եվրոպա ձգվող առևտրական ուղի |
| «նեոլիթյան հեղափոխություն», | յուրացնողից արտադրող տնտեսության անցումը նոր Քարի դարում |
| «ոսկե գեղմ» | ոչխարի ոսկեզօծ մորթի |
| «Պապերի Ավինյոնյան գերություն» | Հռոմի Պապերի 70 տարի Ֆրանսիայի Ավինյոն քաղաքում գտնվելը |
| «Պյուռոսյան հաղթանակ» | մեծ կորուստների գնով ձեռք բերված հաղթանակ |
| «Ռուսկայա պրավդա» | հին Ռուսիայի օրենքների ժողովածու |
| «Օռլեանի կույս» | Ֆրանսիայի ազգային հերոսուհի Ժաննա դ՝Արկի պատվանունը |
| աբսոլյուտիզմ | միապետի բացարձակ իշխանություն |
| ագարակատեր | ֆերմեր |

| | |
|---|---|
| ալիբի | անհերքելի ապացույց |
| Ալլահ | իսլամ կրոնի աստվածը |
| Ակադեմիա | Պլատոնի փիլիսոփայական դպրոցի անվանումը |
| Ակրոպոլիս | սեղանաձև ժայռ Աթենքի կենտրոնում, հայտնի է իր տաճարներով |
| ամբողջատիրական պետություն | այնպիսի պետություն, որի բնակչության կյանքը և կենցաղը ենթարկված էր պետության շահերին |
| այբուբեն | առանձին հնչյուններ արտահայտող նշաններից՝ տառերից բաղկացած գրության տեսակ |
| Արգոնավորդներ | Արգո նավով Յասոնի հետ Կոլխիդա «ոսկե գեղմը» որոնելու մեկնած խմբի անդամները |
| Արեոպագոս | կառավարման մարմին Հին Աթենքում |
| արիացիներ | հնդեվրոպախոս ժողովուրդ |
| արիստոկրատիա | ազնվատոհմիկների անվանումը հին Հունաստանում |
| արտադրող տնտեսություն | սեփական աշխատանքով բարիքներ արտադրող տնտեսություն |
| արքոնտ | սկզբնական շրջանում ժողովրդական ժողովի կողմից ընտրված Աթենքի կառավարիչի տիտղոսը |
| Աքեմենյան տերություն | Կյուրոս Մեծի կողմից ստեղծված Պարսկական տերության անվանումը |
| աքվեդուկ | ջրատար առու Հռոմում |
| աքքադացիներ | Միջագետքի Աքքադ քաղաք-պետության բնակիչները |
| Բաբելոնի աշտարակ | Բաբելոնի Մարդուկ աստծո պատվին կառուցված 6 հարկանի աշտարակ |
| բահատուր | դյուցազն՝ մոնղոլերեն |
| բահրա | հողատիրոջը վճարվող բնամթերային հարկ |
| բանկ | դրամատուն |

| | |
|---|---|
| բանվոր | քաղաքներում վարձու աշխատանք կատարողներ |
| բասիլևս | ցեղապետի անվանումը հին Հունաստանում |
| բատրակ | վարձու աշխատանք կատարող ունեզուրկ գյուղացի |
| բարձրաքանդակ | տաճարների / պալատների պատերին արված |
| բեդվին | անապատի բնակիչ՝ քոչվոր արաբ |
| Բիհիսթունյան արձանագրություն | Դարեհ I-ի եռալեզու ժայռափոր արձանագրությունը |
| բնատնտեսություն | ներփակ տնտեսություն, որտեղ ամեն ինչն արտադրվում էր սեփական կարիքների համար |
| բողոքական | կաթոլիկ եկեղեցու բարեփոխման՝ ռեֆորմացիայի կողմնակիցների ընդհանուր անվանումը |
| բոյար | սլավոնների՝մոտ՝ ազնվատոհմիկ, ազնվական |
| բորսա | ապրանքների մեծածախ առևտրով զբաղվող վաճառականների և գնորդների հանդիպման վայր |
| Բուդդայականություն | Հնդկաստանում առաջացած միաստվածային կրոն |
| բուրգ | փարավոնի բրգաձև դամբարան Եգիպտոսում |
| բրահման | հնդիկ քուրմ |
| գաղութ | Եվրոպացիների կողմից աշխարհի այլ մասերում նվաճված տարածք |
| գիլդիա | առևտրականների միավորում, ընկերություն |
| գիմնազիոն | մարմնակրթարան հին Հունաստանում |
| գլադիատոր | իրար դեմ կռվելու համար վարժեցված ստրուկներ հին Հռոմում |

| | |
|---|---|
| գյոզեր անտառային/ծովային | Նիդեռլանդներում իսպանական տիրապետության դեմ պայքարողների արհամարհական անվանումը |
| գորոդ | ամրացված բնակավայր, քաղաք հին Ռուսիայում |
| գրատպություն | գրքերի տպագրություն |
| դասային միապետություն | պետության կառավարման ձև, երբ միապետը հաշվի էր առնում տարբեր դասերի շահերը |
| դելտա | գետի ճյուղավորումը ծովը թափվելուց առաջ |
| դեմոկրատական պոլիս | ժողովրդի կողմից պարբերաբար ընտրվող պաշտոնյաներով կառավարվող քաղաք-պետություն հին Հունաստանում |
| դեմոս | հասարակ ժողովրդի ընդհանուր անվանումը հին Հունաստանում |
| դիկտատոր | Սենատի կողմից նշանակվող միանձնյա ղեկավար հին Հռոմում |
| դիկտատուրա | միանձնյա ղեկավարում, բռնապետություն |
| դոմինատ | կայսերական բացարձակ իշխանությունը ուշ Հռոմում |
| դոմնա | մետաղը հալեցնելու համար փակ վառարան |
| դրամի կեղծում | ոսկե և արծաթե դրամների մեջ թանկարժեք մետաղի պարունակության պակասեցում |
| դրավիդյան ժողովուրդներ | Հնդկաստանում և Իրանում բնակվող հնագույն ժողովուրդներ |
| դրուժինա | զորաջոկատ, ռուսական իշխանի թիկնազորը |
| ենիչերիներ | օսմանյան բանակի ամենա մարտունակ զինվորները |
| եռապետություն | երեք անձի իշխանություն |

| | |
|---|---|
| Երկար պարիսպներ | Աթենքը Պիրեյ նավահանգստին կապող ճանապարհը պաշտպանող երկշարք պարիսպներ |
| զիկուրատ | մի քանի հարկանի աշտարակաձև կառույց հին Միջագետքում |
| Զրադաշտականություն | իրանական կրոն՝ կրակապաշտություն |
| էդիլ | կարգ ու կանոնին հետևող ընտրովի պաշտոնյա հին Հռոմում |
| էմիր/ամիրա | արաբերեն՝ իշխան |
| Էնսի | Միջագետքի քաղաք-պետություններում քուրմ-տիրակալի տիտղոսը |
| թատերագիր | թատերական ներկայացում գրող անձ |
| թատրոն | հատուկ կիսաշրջանաձև շինություն թատերական ներկայացումների համար |
| թեզիս | մտքերի,գաղափարների ամփոփ ներկայացում |
| թերմա | հասարակական բաղնիք հին Հռոմում |
| Թերմոպիլի կիրճ | Հյուսիսային Հունաստանը Միջին Հունաստանին կապող նեղ ճանապարհը |
| թումեն | մոնղոլների ամենամեծ ռազմական ջոկատը՝ 10000 հեծյալներ |
| թուջ | հալված մետաղ, չուգուն |
| Ժակերիա | գյուղացիական ապստամբություն Ֆրանսիայում XIV դարում |
| ժողովրդական ժողով | տոհմի, ցեղի, գյուղի կամ քաղաքի ողջ բնակչության ժողովը |
| ժողովրդական տրիբուն | պլեբսի իրավունքների պաշտպանի անվանումը հին Հռոմում |
| ինդուլգենցիա | կաթոլիկ եկեղեցու կողմից վաճառվող մեղքերի թողության փաստաթուղթ |
| ինկվիզիցիա | կաթոլիկ եկեղեցու հավատաքննության դատարանը միջնադարում |
| Իսլամ | մահմեդականություն, միաստվածային կրոնի տեսակ |

| | |
|---|---|
| իրավունք | գրավոր օրենքների ամբողջությունը, որոնք պաշտպանվում են պետության հարկադրանքով |
| լեգեոն | հետևակ զորքի միավոր հին Հռոմում |
| Լիկեոն | Արիստոտելի հիմնած դպրոցի անվանումը Աթենքում |
| Լյութերական եկեղեցի | Լյութերի առաջարկած ձևով բարեփոխված եկեղեցի |
| Խալիֆա | մարգարեի տեղապահ |
| խեցեգործություն | կավից ամանեղեն պատրաստելու արհեստ |
| ծովամարտ | ծովային ճակատամարտ նավատորմերի միջև |
| ծովապետություն | կղզիների և առափնյա տարածքների վրա իշխող պետություն |
| կազուս | լատիներեն՝ դեպք, հանգամանք |
| Կալվինական եկեղեցի | Ժան Կալվինի առաջարկած ձևով բարեփոխված եկեղեցի |
| Կախովի այգիներ | ասիճանաձև կառուցված այգիներ հին Բաբելոնում |
| կամպակու | վարչապետի տիտղոս միջնադարյան Ճապոնիայում |
| Կապիտոլիում | Հռոմ քաղաքի 7 բլուրներից մեկի անվանումը |
| կարավելլա | ծովային հեռավոր նավարկության համար պիտանի նավ |
| կնյազ | սլավոնների մոտ՝ ռազմական առաջնորդ, իշխան |
| կոնսուլ | պետության ընտրովի ավագ կառավարիչի անվանումը հին Հռոմում |
| կոնֆեդերացիա | համադաշնություն |
| կոռ | հողատիրոջ օգտին կատարվող հարկային աշխատանք |
| հաղթակամար | հաղթանակած զորքի պատվին կառուցված կամարաձև շինություն |
| հելլենիստական մշակույթ | հունական և արևելյան մշակույթների խաչասերումից ձևավորված մշակույթ |

| | |
|---|---|
| հելոտներ | նվաճված և ստրկացված բնակչության անվանումը Սպարտայում |
| Հինդուիզմ | Հնդկաստանի հեթանոսական բազմաստվածային կրոնի անվանումը |
| հումանիզմ | մարդասիրություն |
| հռետորություն | ճարտասանություն |
| Ղուրան | մահմեդականների սուրբ գիրքը |
| ճեմարան | ուսումնական հաստատություն,որտեղ ուսուցումը տարվում էր ճեմելով՝ զբոսնելով |
| ճիզվիտական օրդեն | «Հիսուսի միաբանություն», կաթոլիկ եկեղեցու թշնամիների դեմ պայքարող վանական կազմակերպություն միջնադարում |
| ճորտ գյուղացի | ավատատիրոջից անձնական կախման մեջ գտնվող գյուղացի |
| մայորդոմ | կառավարիչ-արքունապետ Ֆրանկների թագավորությունում |
| մանուֆակտուրա | ձեռքի աշխատանքով կատարվող արտադրություն |
| մարգարե | «աստծո պատգամախոս» |
| Մեծ վազուրգ | բարձրագույն պաշտոնյա Սասանյան Պարսկաստանում |
| մենիշխանություն | մեկ անձի կողմից իրականացվող իշխանություն |
| Մեսոպոտամիա/Միջագետք | գետերի միջև ընկած երկիր՝ ներկայիս Իրաքի անվանումը հնում |
| Մեքքա | Իսլամի կրոնի «սրբազան քաղաք» |
| միաստվածային կրոն | մեկ աստծո պաշտամունք դավանող կրոն |
| մշակույթ | որևէ քաղաքակրթության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները |
| Մուսեյոն | գիտնականների և արվեստագետների աշխատավայր հին Ալեքսանդրայում |
| մուսուլման / մուսլիմ | մահմեդական կրոնի հետևորդ |
| մրցապայքար | ազդեցության համար մղվող պայքար մարդկանց կամ պետությունների միջև |

| | |
|---|---|
| յուրացնող տնտեսություն | ոչինչ չարտադրող տնտեսություն՝ որսորդություն, հավաքչարարություն |
| յուրտ | թաղիքե վրան՝ մոնղոլի շարժական կացարան |
| նահապետական ընտանիք | ամենա տարեց տղամարդու կողմից ղեկավարվող մի քանի սերնդի մարդկանցից կազմված ընտանիք |
| նեոլիթ | նոր քարի դար, նախնադարի վերջին փուլը |
| նիրվանա | երանելի կյանք ըստ բուդդայականության |
| նոբիլիտետ | երևելիներ, իշխող վերնախավի անվանումը հին Հռոմում |
| նոմ | քաղաք-պետություն հին Եգիպտոսում, հետագայում մարզերի անվանում |
| նոյոն | անվանում էին ազնվազարմ մոնղոլներին |
| նոր ազնվականներ | տնտեսություն կապիտալիստական եղանակով վարող ազնվականներ |
| նուքեր | անվանում էին չքավոր մոնղոլներին |
| շադուֆ | Եգիպտոսում բարձրադիր դաշտերը ջրելու կռունկաձև հարմարանք |
| շահնշահ | Իրանի տիրակալի տիտղոսը՝ արքայից-արքա |
| շումերներ | Միջագետքի հնագույն բնակիչներ |
| շուրջերկրյա ճանապարհորդություն | ծովային կամ ցամաքային ճանփորդություն երկրագնդի շուրջ |
| Պալատին | Հռոմ քաղաքի 7 բլուրներից մեկի անվանումը |
| Պանթեոն | բոլոր աստվածների պատվին կառուցված շքեղ տաճար Հռոմում |
| պապիրուս | Եգիպտոսում պատրաստվող ստվարաթղթի նման թուղթ |
| Պատրիարքություն | ուղղափառ քրիստոնեության ղեկավար կենտրոնի անվանումը |
| պատրիկ | Հռոմի բնիկ քաղաքացի, բառացի ազնվազարմ |

| | |
|---|---|
| պարտային ստրուկ | պարտքը չվճարելու պատճառով ստրուկ դարձված մարդ |
| պարտաքար | գյուղացու հողամասում դրված քար, վրան գրված պարտքի չափը և այն մարելու ժամկետը |
| պերգամենտ | մագաղաթ |
| պերիեկներ | արհեստներով զբաղվող ազատ բնակչության անվանումը Սպարտայում |
| պլեբեյ | Հռոմում անվանում էին եկվորներին, հասարակ մարդկանց |
| պլեբս | Հռոմում անվանում էին ժողովրդին |
| պոլիս | քաղաք, քաղաք-պետություն Հունաստանում |
| պոլյուդյե | հարկերի հավաքման ձև հին Ռուսիայում |
| պրետոր | դատական գործերը վարող ընտրովի պաշտոնյա Հռոմում |
| Պրինցիպատ | Օգտավիանոս Օգոստոսի ստեղծած պետության կառավարման համակարգը |
| պրովինցիա | բառացի«պարտված երկիր», Հռոմի կողմից նվաճված տարածք, նահանգ, շրջան |
| ռաջա | իշխանի տիտղոս Հնդկաստանում |
| Ռենեսանս | Վերածնունդ |
| ռենտա | հողահարկի տարբեր տեսակների ընդհանուր անվանումը |
| ռեսպուբլիկա | բառացի «հանրային գործ», հանրապետություն |
| ռեֆորմացիա | բարեփոխում, վերափոխում |
| Սալիական դատաստանագիրք | ֆրանկների պետության օրենքների ժողովածու |
| սամուրայ | արհեստավարժ ռազմիկ Ճապոնիայում |
| սատիրա | երգիծանք, ծաղրական ներկայացում |
| սատրապություն | վարչական միավորի անվանում Պարսից տերությունում |
| սենյոր | տեր |

| | |
|---|---|
| սեպագիր | Միջագետքում տարածված սեպաձև նշաններով գրի տեսակ |
| Սինտոիզմ | ճապոնացիների հեթանոսական կրոնը |
| սյոգուն | զորապետի տիտղոսը Ճապոնիայում |
| սուլթան | Օսմանյան տերության տիրակալի տիտղոսը |
| սպարտական դաստիարակություն | երիտասարդների ռազմական դաստիարակությունը Հին Սպարտայում |
| ստիլ | մետաղյա գրիչ, որով գրում էին մոմապատ տախտակի վրա հին Հունաստանում |
| ստրատեգ | ընտրովի պաշտոնյա՝ կառավարիչ հին Հունաստանում |
| սֆինքս | մարդու գլխով առյուծի մարմնով արձան հին Եգիպտոսում |
| վառնա | բնակչության սոցիալական խավ հին Հնդկաստանում |
| վասալ | սենյորի համար զինվորական ծառայություն կատարել պարտավոր հողատեր |
| վարձկան զինվոր | մարդ որը վարձի դիմաց ծառայում է ում պատահի |
| վարյագ | վիկինգներին այդպես էին անվանում սլավոնները |
| վեչե | սլավոնների ժողովրդական ժողովի անվանումը |
| վիլլա | հարուստ հռոմեացու գյուղական առանձնատունը |
| տրիումֆ | հաղթահանդես |
| ցեղային միություն | ազգակից տոհմերի միություն |
| ցունամի | ավերիչ հսկայական ծովալիքներ |
| ուլուս | փոխարքայություն՝ Չինգիզ խանի որդիների և թոռների ժառանգական տիրույթները |
| փարավոն | Եգիպտոսում տիրակալի տիտղոսը |

| | |
|---|---|
| Փարոս | լուսաշտարակ Ալեքսանդրայում Փարոս կղզու վրա |
| փիլիսոփա | իմաստություն սիրող/իմաստասեր, գիտնական հին Հունաստանում |
| փողի արժեզրկում | փողի գնողունակության անկում, ապրանքների գների բարձրացում |
| քաղաքակրթություն | հասարակական կյանքի և նյութական բարիքների արտադրության զարգացման մակարդակ |
| քաղաք-պետություն | պետության պարզագույն ձև |
| քարակոթող | քարե սյուն վրան քանդակներով և արձանագրություններով |
| քուրմ | հեթանոսական կրոնի հոգևորական |
| քվեստոր | գանձապահ, հարկերի հավաքմանը հետևող ընտրովի պաշտոնյա հին Հռոմում |
| օլիգարխիա | ազնվազարմների ոչ մեծ խմբի իշխանություն |
| օլիգարխիական պոլիս | ազնվազարմների խմբի կողմից կառավարվող պոլիս |
| օխլոս | ամբոխ |
| օստրակիզմ | դեմոկրատիայի համար վտանգ ներկայացնող քաղաքական գործիչների 10 տարով վտարելը հին Աթենքում |
| օրդեն | միաբանություն |
| օրենսգիրք | օրենքների ժողովածու |
| ֆալանգ | նիզակազեն զորքի հատուկ դասավորություն մի քանի շարք խորությամբ |
| ֆեոդ | ավատ, ժառանգական հողային տիրույթ |
| ֆորում | շուկայական հրապարակի անվանումը հին Հռոմում |